ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 3
ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/49 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

ք.Երևան **29 ապրիլ 2024թ.**
Ժամը՝ **11:00**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի **«22» փետրվարի 2024թ. թիվ 304-Ա** հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **«ՀՀ Գեղարքունիքի մարզի Մաքենիս, ՀՀ Լոռու մարզի Գարգառ, Բազում, Միխայլովկա, Կաթնառատ, ՀՀ Սյունիքի մարզի Շաքի բնակավայրերի կրթահամալիրների կառուցման» աշխատանքների** ձեռքբերման նպատակով **ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/49** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի գնահատման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Ֆելիքս Սարգսյան ՝ Հանձնաժողովի նախագահ
Արմեն Դանիելյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լիլիթ Պետրոսյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Արաքսյա Իսախանյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լուսինե Ղազարյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Նարեկ Աղաջանյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Վարդինե Իսահակյան ՝ Հանձնաժողովի բացող անդամ
Սոնա Կարապետյան ՝ Հանձնաժողովի բացող անդամ

Հանձնաժողովը, հիմքում ունենալով Ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը և ներկայացված փաստաթղթերը, արձանագրեց, որ՝

1.Տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Հանձնաժողովն արձանագրեց, որ

1.1 Համաձայն ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության **«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ և «Օ Փիեռ Գրուպ ՈՒնիվերսալ» ՍՊԸ կոնսորցիումի 2019-2023թթ.** համախառն եկամուտների հանրագումարը կազմում է՝ **11 214 676 194 ՀՀ դրամ: «Ռ. Ղազարյան» ՍՊԸ և «Այպոշին» ՍՊԸ** կոնսորցիումի **2019-2023թթ.** համախառն եկամուտների հանրագումարը կազմում է՝ **5 428 858 131 ՀՀ դրամ: «Արտ Պլաս» ՍՊԸ-ի 2019-2023թթ.** համախառն եկամուտների հանրագումարը կազմում է՝ **6 614 053 924 ՀՀ դրամ:**

1.2 **«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի, «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-Ի և «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ի** կողմից տվյալ օրվա դրությամբ Բանկային երաշխիքի իսկությունը և այն ստորագրած անձի իրավասությունները պարզելու նպատակով ուղարկված հարցումների վերաբերյալ պատասխանները ստացվել են բավարար:

1.3 Մասնակիցների հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են բացառությամբ՝

* Մասնակից **կոնսորցիում «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ և «Օ Փիեռ Գրուպ ՈՒնիվերսալ» ՍՊԸ և «Ռոյ Շին»ՍՊԸ ենթակապալառուի հայտի 05.04.2024 թվականի <<Համատեղ գործունեության>>**

պայմանագրի 2.2 կետի համաձայն կոնսորցիումի մասնակիցներից **Գործընկեր 2-ը՝ «Օ Փիեռ Գրուպ ՈՒնիվերսալ» ՍՊԸ-ն** ներկայացնում է շինարարության իրականացման գործունեության լիցենզիան ըստ հետևյալ ոլորտի՝ **էներգետիկ,** մինչդեռ ըստ հայտին կից ներկայացված փաստաթղթերի՝ մասնակցի մոտ առկա է միայն ներդիրը, իսկ բուն լիցենզիան բացակայում է:

* Մասնակից **«Ռ. Ղազարյան» ՍՊԸ և «Այպոշին» ՍՊԸ** կոնսորցիումի հայտում առկա չէ տեղակապման աշխատանքներում ներգրաված ճարտարագետ-կոնստրուկտորի արտոնագիրը:

1.4 Մասնակիցների հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

2. Հանձնաժողովը որոշեց.

2.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 41-րդ կետը մեկ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը:

2.2Ծանուցել Մասնակիցներին շտկել արձանագրված անհամապատասխանությունները, մինչև նիստի կասեցման վերջնաժամկետը՝ **26.04.2024թ**. ներառյալ:

3. Հանձնաժողովը արձանագրեց, որ.

3.1 Կոնսորցիում «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ և «Օ Փիեռ Գրուպ ՈՒնիվերսալ» ՍՊԸ և «Ռոյ Շին»ՍՊԸ ենթակապալառուի և «Ռ. Ղազարյան» ՍՊԸ և «Այպոշին» ՍՊԸ կոնսորցիումի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար:

3.2 «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ և «Օ Փիեռ Գրուպ ՈՒնիվերսալ» ՍՊԸ կոնսորցիում և «Ռոյ Շին» ՍՊԸ ենթակապալառուի և «ԱրտՊլաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերը տեղակապող կազմակերպությունը՝ «ՍԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻԱՆՆԱ» ՍՊԸ-ն փոխարինվել է «ՇԻՆ-ԿՈՄՖՈՐՏ» ՍՊԸ կազմակերպությամբ: Հանձնաժողովը բավարար է գնահատել առաջարկվող նոր կազմակերպության որակավորումը և փորձը:

4.Տեղեկություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին:

4.1 **ՀՏՌՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/49** ծածկագրով ընթացակարգի հրավերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն ստացվել:

5.Հանձնաժողովը որոշեց.

5.1 Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, ընտրված մասնակիցներ ճանաչել՝

Հ/Հ	Գնման Առարկան	Մասնակցի անվանումը	Պայմանագրի գինը ՀՀ դրամ
2	*«ՀՀ Լոռու մարզի Գարգառ բնակավայրի կրթահամալիրի կառուցման» աշխատանքներ*	«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ և «Օ Փիեռ Գրուպ ՈՒնիվերսալ» ՍՊԸ կոնսորցիում և «Ռոյ Շին» ՍՊԸ ենթակապալառու	1 264 776 804 (Մեկ միլիարդ երկու հարյուր վաթսունչորս միլիոն յոթ հարյուր յոթանասունվեց հազար ութ հարյուր չորս)
3	*«ՀՀ Լոռու մարզի Բազում բնակավայրի կրթահամալիրի կառուցման» աշխատանքներ*	«Ռ.Ղազարյան» ՍՊԸ և «Այպոշին» ՍՊԸ կոնսորցիում	1 264 920 000 / Մեկ միլիարդ երկու հարյուր վաթսունչորս միլիոն ինը հարյուր քսան հազար/
4	*«ՀՀ Լոռու մարզի Միխայլովկա*	«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ և «Օ Փիեռ	1 264 776 804

	բնակավայրի կրթահամալիրի կառուցման» աշխատանքներ	Գրուպ ՈՒՆիվերսալ» ՍՊԸ կոնսորցիում և «Ռոյ Շին» ՍՊԸ ենթակապալառու	(Մեկ միլիարդ երկու հարյուր վաթսունչորս միլիոն յոթ հարյուր յոթանասունվեց հազար ութ հարյուր չորս)
6	«ՀՀ Սյունիքի մարզի Շաքի բնակավայրերի կրթահամալիրների կառուցման» աշխատանքներ	«ԱրտՊլաս»ՍՊԸ	1 157 700 000 / մեկ միլիարդ մեկ հարյուր հիսունյոթ միլիոն յոթ հարյուր հազար/

5.2 **«ՀՏՋՀ-ԴԲՄ-ԱՇՁԲ-2024/49»** ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին տեքստը:

5.3 Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հանձնաժողովի նիստը

նախագահող՝

Ֆելիքս Սարգսյան _____

անդամներ՝

Արմեն Դանիելյան _____

Լիլիթ Պետրոսյան _____

Արաքսյա Իսախանյան _____

Լուսինե Ղազարյան _____

Նարեկ Աղաջանյան _____

Վարդինե Իսահակյան _____

Սոնա Կարապետյան _____

քարտուղար՝

Ռոզա Ասատրյան _____